ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ «ՄԵԲԱՍՏԻԱ» ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

0065, ք.Երևան, Մեբաստիա 9

հեռ. (+374 10) 74-24-00

էլ.փոստ 15.pol@mail.ru

N° 015 / 88

«12» «08» 2024թ.

«Ագաստ»ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ՝ Գ. Մուրադյանին

Ծանուցում

պայմանագիրը միակոմանի լուծելու մասին

«Մեբաստիա»ԱԿ ՓԲԸ և «Ագաստ»ՍՊԸ-ի միջև 26.02.2024թ. կնքված «ՄԵԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24-9»-4 պայմանագի շրջանակներում «Ագաստ»ՍՊԸ ստանձնել է դեղորայքի մատակարարաման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:Սակայն «Ագաստ»ՍՊԸ-ին 27.05.2024թ-ին պատվեր հայտ է ներկայացվել N4 չաբաժնի/Կլոպիդոգրել 75մգ դեղահաբ/ համար,որը չի մատակարարվել:Պայմանագրի համաձայն ապրանքը պետք է մատակարարվի Պատվիրատույից պատվերը ստանալուց 5 օրյա ժամկետում,սակայն պատվերը չի մատակարարվել: «Ագաստ»ՍՊԸ-ին տրվել է ևս հավելյալ երկու աշխատանքային օր,բայց մինչ օրս ապրանքը չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.04.2017թ թիվ 526-ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայամանագրի 8.9 կետը՝ «Մեբաստիա»ԱԿ ՓԲԸ-ն միակողմանի լուծում է և «Ագաստ»ՍՊԸ-ի միջև 26.02.2024թ. կնքված «ՄԵԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24-9»-4 ծածկագրով պայամանգիրը :

Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի կետի 6-րդ ենթակետը՝Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայամանգրով նախատեսված կամ

գնման գործնթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը ,որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործնթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադրեցմանը:

Պայամագիրը միակողմանի կհամարվի լուծված սույան ծանուցումը պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից:

Միաժամանակ տեղեկացնում եմ,որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման ապահովման և որոկովորմոն ապահովման գումարները ,ապա «Ագաստ»ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի ամբողջությամբ լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ բանկային երաշխիքների գումարների գանձման նպատակով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

Լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորան ապահովման վերը նշված գումարները (Սեբաստիա Ա/Կ ՓԲԸ 1150012721170100 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ

պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՍԵՐԳԵՅ ՄԱՆՈԿՅԱՆ

Կատ.՝ Հ. Սահակյան